

Рассказ является уникальной формой психологического анализа и определенным образом сопрягается с мировоззрением автора.

THE FIRST CREATIVE EXPERIENCE

V. R. Grigoryan

After the fuss that was made about the publishing of the essay „Ahnidzor”, the new stories “Hovsep Returned From The Army” and „The Fleeting Kisses” were published in the “ Soviet Armenia” magazine, 1962. These works were not included in Matevosyan’s publications.

In 2006 these works were published in the collection “The Bridge of the Princess Nana”. The first story was named “Veradarts” (discussions with Matevosyan, Yerevan, 2003, page 24). The story is distinguished by its spiritual analyses and the unique worldview of the author.

ՉԱՐԵՆՑԻ «ԱՍՊԵՏԱԿԱՆ» ՊՈԵՄԸ

Ն. Կ. ՂԱԶԱՐՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ,

ԳՊՀ դասախոս

«Էմալե պրոֆիլը Ձեր» շարքը և «Ասպետական» պոեմը միավորվում են բարոկկո կոչվող ոճի շրջանակներում (բարձրահարկ, ազնվակիր՝ ոճ)։ Բարոկկո ոճի է Տորկվատո Տասսոյի ստեղծագործությունը, որի «Ազատագրյալ Երուսաղեմ» պոեմի ազդեցությունն են տեսնում «Ասպետական»-ի վրա (տես՝ Չարենցի երկեր, հ. 3-րդ, 1964թ., պոեմի ծանոթագրությունները)։ Այնտեղ ասված է, որ «Ասպետական»-ի հյուսվածքում Չարենցն օգտագործել է Խաչակրաց արշավանքների ժամանակներին բնորոշ բառ ու բան, իտալական ուշ վերածնության բանաստեղծ Տորկվատո Տասսոյի «Ազատագրված Երուսաղեմ» պոեմի համեմատությունները, գույներն ու հակադրությունները»։ Ուշադրություն է պահանջում այն փաստը, որ Տասսոյի և Չարենցի պոեմները գրված են օկտավներով։ Տասսոյի պոեմն սկսվում է «Գըթած գէնքերն ու Ջորագլուխը կ'երգեն» տողով¹, իսկ «Ասպետական»-ի առաջին ութնյակում ասպետը «Երգում է հարվածն իր հատու, // Մահացու հարվածն իր տեգի»։ «Ասպետական»-ի քնարական հերոսը «մի հոգնած, տխուր տրուբադուր» է։ Թե վերնագիրը և թե ենթավերնագիրը (ռապսոդիա) հուշում են եվրոպական տրուբադուրական պոեզիայի հետ Չարենցի պոեմի ունեցած կապի մասին։ Ռապսոդիայի բանաստեղծական ժանրին մենք դեռևս կանդիդատառնանք։ Այժմ հարկ է նշել, որ տրուբադուրների երգերը ներկայանում են որպես անդալուզյան, լատինական միջնադարյան, ռոմանական ժողովրդա-

¹ «Երուսաղեմ Ազատեալ», Վենետիկ, Ս. Ղազար, 1911թ.։

կան պոեզիա, որոնք կապված են ժամանակի արաբական պոեզիային: Այդ կապի մատնանշմամբ է պայմանավորված «մզկիթ», «մինարեթ», «բեդվին», «մավր», «ցեղին արաբ», «Դամասկ», «սարաջի», սևագրում՝ «սուլթանի մեջեդ» բառերի և կապակցությունների օգտագործումը («Մեկի կուրծքը մզկիթ էր սպիտակ», «Մյուսինը – սեգ մի տաճար», «Մեկի բոյը – սեգ մի մինարեթ», «Բեդվինի խարույկներ էին խոլ // Սևամած աչքերը մեկի...»):

Չարենցը «Ասպետական»-ի գլուխները համարակալել է հռոմեական թվանշաններով:

Նա «Ասպետական»-ից վաղ գրել է «Տաղարան» շարքը, նախապես դիմել է հայկական, ապա նոր եվրոպական միջնադարին (ազգային ու եվրոպականը մշտապես զուգահեռվում, փոխներթափանցում, ապա և միասնանում են Չարենցի պոեզիայում):

Բանաստեղծը միջնադարը համալիր է ընդգրկում: Նա հայկական միջնադարի բանաստեղծական ավանդներին դիմում է նաև կյանքի վերջին շրջանում:

«Տաղարան»-ում, գրում է Ս. Աղաբաբյանը, «Սիրո...իսկական ասպետ է Չարենցի սիրահարը»: Եվրոպական միջնադարյան պոեզիայում սերը իր բնույթով ասպետական է, որի հետևությամբ գրվել է Չարենցի այս պոեմը:

«Տաղարան»-ի սերը մարմնական չէ, այնինչ «Ասպետական» պոեզիայում սերը երկբնույթ է՝ և անմարմնական, և մարմնական: Մարմնական սիրո տարփողումով հայրեններն են մոտ կանգնած եվրոպական միջնադարյան պոեզիային (հայրենների և տրուբադուրական պոեզիայի տիպաբանությունը ուսումնասիրության խնդիր է): Հայրեններից մեկում արտահայտվում է այն տրամադրությունը, որ սիրուհուց բաժանվելիս «քան զմեռնելն այլ ճար չի լինի», ինչը դրսևորված է նաև «Ասպետական»-ում: Տրուբադուրական պոեզիայի ներկայացուցիչ Արնաուտ դե Մարեյլի մի բանաստեղծության մեջ ասվում է՝ «Տիկին, ես մահ կընդունեմ, // Եթե Ձեզ չի փափկացնի// Վիշտն ու տառապանքը իմ»: Ճիշտ է, ասված է գալանտ ոճով, սակայն նույնն է, ինչ «քան զմեռնելն այլ ճար չի լինի» արտահայտությունը: Չարենցի պոեմում մարմնական սիրո գովերգը, ինչպես տրուբադուրական երգերում, բարձրաշխարհիկ է, գեղագիտականացված, ինտելեկտուալ, ինչի շնորհիվ մարմնականը հետ է մղվում, տեղը գիջելով «խոր ու ազահ կարոտին», մերժվածության ողբին:

**-Մինչև լույս աղմկեց իմ հոգում
Այդ կարոտը, որպես ուրազան,
Մինչև լույս մռնչաց անքուն
Այդ կարոտը չար ու ազահ:
Մինչև լույս իմ հոգում շաչեց
Այդ կարոտը որպես էգ մի հովազ:
Ու ծեգին իմ սիրտը հողմածեծ
Անապատ էր արդեն գորշավազ:**

Հարկ է խոստովանել, որ Չարենցի «Ասպետական»-ը բանավեճ է բուն ասպետական պոեզիայի հետ: Տասնյոթերորդ օկտավում պոեմի քնարական հերոսը, տեսնելով «Մարմինները նրանց գեղանի», մոռանում է իր սրտի լուսե թագուհուն:

**-Մոռացա թագուհուն իմ անգին,
Որի մի հայացքի համար
Ես դարձել էի խաչակիր:**

Տեսլային սերը փոխարկվում է «բոց մի մահու» պատճառող սիրով: Գեղեցկուհիների մարմնի «ազահ» ու չար կարոտից ասպետի հոգում ուրագան է շաչում: Խաչակրի անկասելի ձգտմամբ ու դրա կասեցման ցավից ծնվող տառապանքով է չափվում սերը:

Չարենցն արդեն մի կողմ էր թողել «Լիրիկական բալլադների» ու «Ծիածան»-ի միաստիկ սիրերգությունը:

«Ասպետական»-ում սերը թեև մարմնական է, սակայն հեռու է ժամանակի «սեռական բնազդի» պոեզիայից, իր իսկ «Ռոմանս անսեր»-ից: Ս. Աղաբաբյանը «Ասպետական» ռապսոդիան հակադրում է «ռոմանսանսերյան» տրակտատին, ասելով, որ «Ասպետական»-ում մեծարվում է սիրո ուժը²: Պոեմին բնորոշ է ինտելեկտուալ, մեկամիտիկ սիրերգությունը: Չարենցը անցում է կատարում տրուբադուրական պոեզիայի ողբի (ոտաօ) ձևին: Մինչև վերջ բարձրակետին է մնում ահագնացող, «ուրագանային» ռիթմը, որը «Ասպետական»-ից անցնում է «Նավգիկեն»:

Չարենցը, սկսած «Լիրիկական բալլադների» «Երեքը» պոեմից, «Ասպետական»-ում և «Նավգիկեն»-ում դիմում է միֆական կրկնակի ըմբռնմանը: «Երեք»-ում տղամարդն է կրկնակ ունեցողը, մյուս երկուսում՝ սիրո առարկան, մինչդեռ խորհրդապաշտական շրջանում սրտի «թագուհին» մեկն է: «Ասպետական»-ում երկուսն են գեղեցկուհիները՝ մեկը մյուսի կրկնակը (արևմտյան և արևելյան նշաններով իրարից տարբեր): «Նավգիկեն»-ում կրկնակ են երազած և իրական կինը: Երազած կինը իր հերթին կրկնավորվում է՝ արևմտյան և արևելյան նշաններով:

**-Մերթ սպիտակ, որպես մարմարոնյա արձան,
Մերթ միկենյան կավե մի վազի պես,-
Մերթ եբենյա մարմնով եգիպտոսի դարձած՝
Չմայել է հեռվից իմ Նավգիկեն:**

Կրկնակի օգտագործումը չարենցագիտության մեջ բաց է թողնվել, մինչդեռ երևույթը դրամատիզմի բարձրակետն է (երկբևեռացում, անորոշություն, տեքստի թվացիկ անավարտունություն, առաջինի հայելային անդրադարձ երկրորդում և հակառակը): Երկու գեղուհիները դերով տարբեր չեն. մեկը հերոսը չէ, մյուսը՝ կրկնակը: Երկուսը ոչ թե իրականը, այլ հնարավորն են, ինչպես Նավգիկեի դեպքում է:

«Ասպետական»-ի սյուժեն սիմվոլիկ-միֆական նշանակություն ունի»,- գրում է Զ. Էդոյանը: Անկասկած պոեմի սյուժեի հիմքում ընկած է միֆականը: Չարենցը ծանոթ էր Զ. Ֆրոյդի հոգեվերլուծական տեսությանը: Նա «Պոեմ անվերնագիր»-ի տարբերակի էջի վրա նշում է Ֆրոյդի անունը (ըստ Էդգար Պոի +Ֆրոյդ...»):

² Ս. Աղաբաբյան, «Չայ սովետական գրականության պատմություն», Եր., 1986, էջ 87:

«Ասպետական»-ի սյուժեն տրուբադուրի կողմից Ալֆոնս Անդոյի սպանությունը՝ 93-ամյա, ակնհայտորեն արձագանք է էդիպի բարդության: Սպանությունից հետո անգամ գեղանիները ենթակա են մնում ցեղապետի (հոր) կամքին: Ասպետի (որդու) սերը արգելված է:

Պոեմի ենթավերնագիրը՝ ռապսոդիա, նշանակում է խորհրդավոր սյուժե ունեցող, մինչև լուսաբաց ծավալվող գաղտնի սիրո երգ: Չարենցը հետևել է տրուբադուրական պոեզիայի ալբա տեսակին, որը լուսաբացին ընդհատվող գիշերային սիրո մասին է:

Ուշադիր ընթերցելով պոեմը, կտեսնենք, որ սյուժեն ծավալվում է գիշերը և ավարտվում «ծեգին».

**-Իսկ ես... մինչև լույս մնացի՝
Կռքնած կլոր սեղանին:
Մինչև լույս աղմկեց իմ հոգում...
Ու ծեգին իմ սիրտը հողմածեծ
Անապատ էր արդեն գորշավազ:**

Ալֆոնս Անդոյին սպանելուց հետո ծայրահեղ խստասրտությամբ են աղջիկները վարվում տրուբադուրի հետ.

**-Ճանկռտում էին նրանք ինձ,
Գազազած ձեռքերս կծում,
Ու թքում էին դեմքիս
Վահրով՝ դառն ու կծու:**

Սիրուհու խստասրտությունը հատկապես բնորոշ է վազանտների պոեզիային: Անհնար է խստասիրտ տիրուհու սրտում սեր արթնացնել:

Սիրուհու տունը տրուբադուրական պոեզիայում բանտ է: «Ասպետական»-ում աղջիկները ասպետին զգում են դոյակի բանտը, որտեղից նա փախչում է:

Միջնադարյան եվրոպական տրուբադուրների, միմենզինգերների, վազանտների պոեզիային նվիրված գրքում («Поэзия трубадуров, Поэзия миннезингеров, Поэзия вагантов», Москва, 1974г.) նշվում է, որ տրուբադուրների կողմից գովերգվող տիկինը, որպես կանոն, ամուսնացած կին է, սովորաբար ֆեոդալի կինը: «Ասպետական»-ում երկու գեղանիները դոյակատիրոջ՝ ֆեոդալի սիրուհին են: Եվրոպական պոեզիայում տրուբադուրը իրեն համարում է գեղեցկուհու վասալը: Չարենցի պոեմում հարաբերությունը գեղուհիների հանդեպ նույնն է:

«Տրուբադուրների պոեզիան, Միմենզինգերների պոեզիան, Վազանտների պոեզիան» գրքի առաջաբանում Բ. Պուրիշևը նշում է՝ «Միջնադարը պատկերանում է ասպետով, թշնամուն խոցող ծանր սրով, ֆեոդալական ամրոցով», որոնք և ներառված են Չարենցի պոեմում: «Թշնամուն խոցող ուժը» մի դեպքում՝ սուր, մյուս դեպքում՝ «Ջորագլուխ», գովերգված են և Տասսոյի, և Չարենցի պոեմներում:

Տրուբադուրական պոեզիայի հետ «Ասպետական»-ի կապի մասին կարող է վկայել պոետիկական մեկ այլ հնար՝ ունկնդիրին անմիջական դիմելաձևը: «Աս-

պետական»-ի տարբերակում կարդում ենք.

**-Նրանք երկուսն էին- լսի՛ր, ընթերցող,
Երգս թող ավլվան հոսի, ընթերցող:
Մեկը արև էր [վառ] սև,
Մեկը- ճերմակ՝ երկնի լուսին, ընթերցող:**

Հովհաննես Թումանյանի «Թմրկաբերդի առումը» պոեմն սկսվում է «պարոն-ներին», «սիրուն տիկնանց», «ջահել կանանց» դիմումով, ինչը պոեմին է անցել աշուղական պոեզիայից: Փաստը մասնավոր վկայություն է հայ աշուղական պոեզիայի և եվրոպական տրուբադուրական պոեզիայի տիպաբանական ինչ-ինչ նմանության մասին: Չարենցը պոեմը մշակելիս հրաժարվել է դիմելաձևից՝ առաջնությունը տալով ամբողջությամբ ինտելեկտուալ «պատումին»:

ПОЭМА Е. ЧАРЕНЦА „РЫЦАРСКАЯ“

Н. К. Казарян

Статья посвящена анализу поэмы Е. Чаренца "Рыцарская". Поэт воспевае любовь как высшую духовную потребность человека. Он использует опыт европейского средневекового стиха и образные формы провансальского стиха.

В статье сделана попытка выявления в поэме жанровой формы "рапсодия" и дана фрейдовская интерпретация образа.

THE POEM "ASPETAKAN" BY CHARENTS

N. K. Hazaryan

The poem "Aspetakan" is the best work written by Charents. The poet praises love as the greatest spiritual demand. The poet used the experience of the European medieval poems.

Freud genre of protagonists „as well as the genre rhapsody" are covered in the article.